Պարույր Սևակ

Ընկերուհիս

Ահա և իմ տան նոր բնակիչը՝
Իմ առաջնեկը, նորածին որդին,
Որի մանկական առաջին ճիչը
Այնպես ներդաշնակ ու քաղցր է հնչում
Խաղաղության մեջ իմ ժողովրդի:
Քնել է հիմա իմ փոքրիկ որդին:
Այնպես խաղաղ է այդ անմեղ քունը,
Կարծես մանկական լույս դեմքի վրա
Շառագունել է և անդրադարձել
Նույն ինքը երկրիս խաղաղությունը:
. . . . . .
...Հենց այս վայրկյանիս,
Ասես չտրված իմ հրամանով,
Արթնացավ ահա նա միանգամից:
Մայրը խոսում է նրա հետ հիմա
Մայրական բոլոր խոսքերով ծանոթ:
Վախենում է նա.
-Բարձրացավ քամի,
Օդանցքը փակե՛ք, փակեցեք դո՛ւռն էլ...
-Այս փաթաթանը կոպիտ է կարծես...
-Փոշտա՛ց:

-Հազա՛ց:

-Աստվա՛ծ իմ, մրսե՛ց...

Եվ անվերջ նո՛ւյնը, միշտ նո՛ւյնը, նո՛ւյնը.

-Փոշտա՛ց...

-Մրսե՛ց...

-Թեթև՛ է հագել...

-Միջանցուկ քամի՛...

-Օդանցքը փակե՛լ...

Կարող է այսպես տնել ողջ տարին,

Կարող է այսպես տնել կյանքը ողջ:

Ես հասկանում եմ, որ մայր է բարի,

Բայց անվերջ նո՛ւյնը, միշտ նո՛ւյնը, օ, ո՛չ:

Ու ես ժպտադեմ դիմում եմ նրան.

-Սիրելի՛ս, լսի՛ր.

Դու ի՞նչ ես անում իմ միակ որդուն:

Թո՛ղ որ բաց լինի և օդա՛նցք, և դո՛ւռ,

Միջանցիկ քամին թող որ ներս խուժի,

Իսկ դու լավ հիշիր,

Դու մի՛ մոռանա նորից ու նորից,

Որ այս մանկիկը պիտի չմրսի,

Որ այս մանուկը պիտի չսարսի

Համաշխարհային.

սպասվո՛ղ,

ներկա՛

Բոլո՛ր միջանցիկ սուր քամիներից:

Երևան